«Մոգո» ՈՒՎԿ ՍՊԸ

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

2017թ.հունիսի 23-ից (հիմնադրման ամսաթվից) մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն 2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 3
Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 4
Ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 1 5

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young CJSC
1 Northern Ave., office 27
Yerevan, 0001, Armenia
Tel: +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Fax: +374 (10) 500 706
www.ey.com/am

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0001
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Հեռ. +374 (10) 500 790
+374 (10) 500 705
Ֆաքս. +374 (10) 500 706

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Մոգո» ՈՒՎԿ ՍՊ ընկերության Բաժնետիրոջը և Տնօրենների խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «Մոգո» ՈՒՎԿ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Ընկերություն») 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2018թ. հունիսի 26-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք:

Կառուցելով
բարեկեցիկ աշխարհ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և Տնօրենների խորհրդի պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ Էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ Է. Հայրապետյանի
(գործող 2016թ. օգոստոսի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)

26 հունիսի, 2018թ.

«ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ»
«ERNST & YOUNG»
00057741

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
(հազար ՀՀ դրամ)

	2017թ.
Ակտիվներ	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	48,582
Հաճախորդներին տրված վարկեր	970,784
Հիմնական միջոցներ	18,086
Ոչ նյութական ակտիվներ	4,057
Հետաձգված հարկային ակտիվ	29,694
Այլ ակտիվներ	8,810
Ընդամենը ակտիվներ	**1,080,013**
Պարտավորություններ	
Բանկերից ստացված վարկեր	805,878
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	91,734
Այլ պարտավորություններ	488
Ընդամենը պարտավորություններ	**898,100**
Կապիտալ	
Բաժնետիրական կապիտալ	300,000
Կուտակված վնաս	(118,087)
Ընդամենը կապիտալ	**181,913**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	**1,080,013**

Ստորագրվել և վավերացել են Ընկերության Ղեկավարության կողմից

Մեսրոպ Առաքելյան

Գլխավոր տնօրեն

Գևորգ Կարապետյան

Գլխավոր հաշվապահ

26 հունիսի, 2018թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվություն

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

(հազար ՀՀ դրամ)

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա-հատվածի համար
Տոկոսային և նմանատիպ եկամուտ	36,073
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	(10,278)
Զուտ տոկոսային եկամուտ	**25,795**
Վարկի արժեզրկման գծով պահուստ	(24,360)
Զուտ տոկոսային եկամուտ վարկի արժեզրկման գծով պահուստից հետո	**1,435**
Կոմիսիոն և այլ վճարների գծով եկամուտ	26,112
Կոմիսիոն և այլ վճարների գծով ծախսեր	(2,144)
Կոմիսիոն և այլ վճարների գծով զուտ եկամուտ	**23,968**
Արտարժութային գործառնություններից զուտ օգուտ	6
Այլ գործառնական եկամուտ	110
Անձնակազմի գծով ծախսեր	(54,224)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	(119,076)
Վնաս մինչև շահութահարկ	**(147,781)**
Շահութահարկի գծով փոխհատուցում	29,694
Ընդամենը հաշվետու ժամանակահատվածի վնաս	**(118,087)**
Այլ համապարփակ եկամուտ	–
Ընդամենը հաշվետու ժամանակահատվածի համապարփակ վնաս	**(118,087)**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

(հազար ՀՀ դրամ)

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատ-վածի համար
2017թ. հունիսի 23-ի դրությամբ	–
Բաժնետիրական կապիտալի համալրում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում	300,000
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում համապարփակ վնաս	(118,087)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**181,913**

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար

(հազար ՀՀ դրամ)

	2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատ-վածի համար
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից	
Ստացված տոկոսային եկամուտ	26,828
Ստացված կոմիսիոն և այլ վճարներ	21,605
Վճարված կոմիսիոն և այլ վճարներ	(2,144)
Վարչական և այլ գործառնական ծախսեր	(36,448)
Վճարված աշխատավարձ և հարակից հարկեր	(43,026)
Դրամական միջոցների հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**(33,185)**
Գործառնական ակտիվների զուտ ավելացում	
Հաճախորդներին տրված վարկեր	(985,899)
Այլ ակտիվներ	(4,303)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված գործառնական գործունեությունում	**(1,023,387)**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից	
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(23,637)
Զուտ դրամական միջոցների հոսքեր՝ օգտագործված ներդրումային գործունեությունում	**(23,367)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	
Մուտքեր վարկերի ստացումից	800,000
Ստացված վարկերի գծով վճարված տոկոսավճար	(4,400)
Մուտքեր բաժնետիրական կապիտալի համալրումից	300,000
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից	**1,095,600**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	6
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**48,582**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 2017թ. հունիսի 23-ի դրությամբ	**–**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**48,582**

Ծանոթագրություն 1

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «Մոգո» ՈՒՎԿ ՍՊ ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են Ընկերության՝ 2017թ. հունիսի 23-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկատվությունը, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «Մոգո» ՈՒՎԿ ՍՊ ընկերության էլեկտրոնային կայքում: